

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

26.07.2012

Հուլիսի 26-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը աշխատանքային այցով եղավ Ճամբարակ քաղաքում: Նա հանդիպում ունեցավ տարածքի համայնքների և հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների հետ: Դիմելով ներկաներին մարզպետը նշեց, որ պետք է համագործակցված աշխատանք տանենք, որպեսզի լուծում տանք այն բոլոր խնդիրներին, որոնք այսօր ծառացած են առանձին համայնքներում: Ռաֆիկ Գրիգորյանը անդրադարձավ բոլոր իրականացված և ընթացքի մեջ գտնվող ծրագրերին, որոնք առկա են տարածաշրջանի համայնքներում և որոնց լուծումը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անմիջական ուշադրության կենտրոնում է: Այնուհետև մարզի ղեկավարը դիմեց համայնքների ղեկավարներին՝ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը ակտիվացնելու և սեղմ ժամկետում արդյունավետ ցուցանիշ ապահովելու հորդորով: «Միայն թիմային աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի արագ կերպով վերացնել մարզի գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական և այլ ոլորտներում եղած խնդիրները,- իր խոսքում նշեց մարզպետը, իսկ ես պատրաստ եմ լինել այն ղեկավարի կողքին, ով իր աշխատանքով օրինակ կձառայի մյուսների համար,»: Ռաֆիկ Գրիգորյանը քննարկեց նաև տարածաշրջանում առկա ճանապարհաշինական մի շարք խնդիրներ, անդրադարձավ համայնքների քառամյա զարգացման ծրագրերում առկա հիմնախնդիրներին: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց Գեղարքունիքի մարզ- ԼՂՀ Մարտունի համագործակցության շրջանակներում հուլիսի 30-ից Շորժայի հանգստյան տանը կազմակերպել ԼՂՀ Մարտունու տարածքի ծնողագուրկ 15 դպրոցականների 10-օրյա հանգիստը:

Համայնքների ղեկավարները մարզպետին դիմեցին կաթի մթերման, բերքահավաքի ընթացքի, սոցիալ- տնտեսական և մշակութային բնույթի բազմաթիվ հարցերով:

Գեղարքունիքի մարզպետը Ճամբարակի քաղաքապետարանում կատարեց նաև քաղաքացիների ընդունելություն: Դիմումատուներից 13-ին տրվեց դրամական օգնություն, իսկ 3 քաղաքացիների կողմից աշխատանքի տեղավորման խնդրանքով ներկայացված դիմումներին պատասխան կտրվի օրենքով սահմանված ժամկետներում: